Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ - 2026

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| Ընդհանուր ակնարկ | 4 |
| Սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի դինամիկան | 5 |
| Սոցիալական պաշտպանության բյուջեն | 6 |
| Սոցիալական պաշտպանության բյուջեի կառուցվածք ըստ ծրագրերի | 8 |
| Սոցիալական պաշտպանության բյուջեի ծրագրերը | 12 |
| Ծրագիր- 1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն | 13 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում (1011-11007) | 17 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում (1011-12007) | 19 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում (1011-32001) | 20 |

Սույն հրապարակումը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ,«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական աջակցության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծության իրականացում» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

2026 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 3,091.0 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,627.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ -536.8 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 25.9, 30.5 և 4.5 տոկոսը:

Ըստ ՀՀ կառավարության 2026 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագրի սոցիալական պաշտպանությունը պատմականորեն պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկն է, որի հիմնական նպատակներն են երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն ու Հայաստանի Հանրապետության բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

2026 թվականին պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի ֆինանսավորմանը կուղղվի 993.02 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 87.16 մլրդ դրամով կամ 9.62 տոկոսով:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ







- 2026թ.-ին նախատեսվում է վերականգնել սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում, ապահովելով աճի դինամիկան մինչև 27.4%, ինչը նախորդ տարվա համեմատ բարձր է 1.1 տոկոսային կետով:
- 2020-2026 թվականներին սոցիալական պաշտպանության ոլորտի բյուջեի տեսակարար կշռի միջին մակարդակը ընդամենը բյուջետային ծախսերում կկազմի 28.21 %:
- 2025թ.-ին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է ոլորտի ծախսերի նվազում՝ մինչև 0.2 տոկոսային կետով, իսկ 2026թ.-ին 2025թ.-ի նկատմամբ կանխատեսվում է աճ՝ 0.1 տոկոսային կետով:
- 2020-2026թ.-ին ՀՆԱ-ում սոցիալական պաշտպանության ծախսերի հարաբերակցության միջին մակարդակը կազմել է 8.2 %:
- Արդյունքում, երկու ցուցանիշների միաժամանակյա աճը 2026թ.-ին փաստում է, որ տնտեսական կայունացման ֆոնին սոցիալական պաշտպանությունը շարունակում է մնալ պետական քաղաքականության առանցքային գերակայություններից մեկը՝ միտված հասարակության բարեկեցության և սոցիալական հավասարության ամրապնդմանը:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ




- 2026թ.-ին պետական բյուջեի ընդհանուր ծախսերում գերակայում են սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը:
- Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորման աճը համեմատաբար կայուն է: 2026թ.-ին ոլորտին նախատեսվում է ուղղել 993.02 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջետային ծախսերի 27.4 %:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ




- 2026թ. ոլորտի բյուջեն կաճի 9.6 տոկոսով նախորդ տարվա համեմատ և կկազմի 993.02 մլրդ դրամ:
- 2026թ.-ին նախորդ տարվա նկատմամբ աճը պայմանավորված է կառավարության կողմից որդեգրված սոցիալական ուղղվածության ֆինանսավորման շարունակական աճով:
- Ֆինանսավորման ամենաբարձր աճն արձանագրվել է 2024թ.՝ 20.8%՝ 2023թ. նկատմամբ:
  Մինչդեռ 2022թ. այն նվազել է՝ -1% 2021թ. համեմատ:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

| ԴԱՍԻՉ | ԱՆՎԱՆՈՒՄ | 2025թ. ,պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) | 2026/2025 (%) |
|---|---|---|---|---|
| 1005 | Պարգևավճարներ և պատվովճարներ | 11,107,100 | 10,500,200 | ↓ -5.5 |
| 1011 | Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն | 23,410,935 | 25,307,015 | ↑ 8.1 |
| 1015 | Սոցիալական փաթեթների ապահովում | 11,694,096 | 9,600,000 | ↓ -17.9 |
| 1032 | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն | 4,860,645 | 5,736,910 | ↑ 18.0 |
| 1068 | Ժողովրդագրական վիճակի բարելավում | 80,087,570 | 83,042,759 | ↑ 3.7 |
| 1082 | Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում | 24,976,802 | 25,987,044 | ↑ 4.0 |
| 1088 | Զբաղվածության ծրագիր | 1,733,100 | 11,425,977 | ↑ 559.3 |
| 1098 | Բնակարանային ապահովում | 12,006,786 | 15,625,389 | ↑ 30.1 |
| 1102 | Կենսաթոշակային ապահովություն | 560,271,500 | 590,765,100 | ↑ 5.4 |
| 1117 | Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ | 8,232,094 | 8,244,199 | ↑ 0.1 |

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

| ԴԱՍԻՉ | ԱՆՎԱՆՈՒՄ | 2025թ. պլան,հազար դրամ | 2026թ., հազար դրամ | 2026/2025 (%) |
|---|---|---|---|---|
| 1141 | Երեխաների հիմնահարցեր | 4,965,335 | 5,864,174 | ↑ 18.1 |
| 1145 | Կանանց հիմնահարցեր, ընտանեկան և կենցաղային բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակացություն | 157,764 | 177,877 | ↑ 12.7 |
| 1153 | Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր | 149,658 | 181,564 | ↑ 21.3 |
| 1160 | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում | 3,300,560 | 4,497,550 | ↑ 36.3 |
| 1184 | Ավանդների և այլ փոխհատուցումներ | 1,010,000 | 1,010,000 | 0.0 |
| 1205 | Սոցիալական ապահովություն | 122,676,473 | 140,051,862 | ↑ 14.2 |
| 1206 | Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ | - | - | - |
| 1225 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն | 35,000,000 | 55,000,000 | ↑ 57.1 |

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

2026թ.-ի սոցիալական պաշտպանության բյուջեում մի շարք ծրագրերի ֆինանսավորումը **կաճի**, մասնավորապես՝

- Զբաղվածության ծրագիր (1088) աճել է **559.3%**,
- Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն (1225) աճել է 57.1%,
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում (1160) աճել է 36.3%,
- Բնակարանային ապահովում (1098) բարձրացել է 30.1%,

Միևնույն ժամանակ, որոշ ծրագրերի դեպքում արձանագրվել է **նվազում**.

- Սոցիալական փաթեթների ապահովում (1015) ծրագրերի ֆինանսավորումը նվազել է -17.9%-ով,
- Պարգևավճարներ և պատվովճարներ (1005) նվազել է՝-5.5%-ով

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ




| | | | |
|---|---|---|---|
| | 1011 | Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն | 2.55% |
| | 1068 | Ժողովրդագրական վիճակի բարելավում | 8.36% |
| | 1082 | Կենսաթոշակային ապահովություն | 59.49% |
| | 1102 | Սոցիալական ապահովություն | 14.10% |
| | 1205 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն | 5.54% |
| | 1225 | Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում | 2.62% |
| | Այլ ծրագրեր | | 7.34% |

- Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը 2026-ին կիրականացվի 18 բյուջետային ծրագրերի և 91 միջոցառումների միջոցով, 2025թ.-ի՝ 18 ծրագիր և 88 միջոցառման դիմաց:
- 2025թ.-ի համեմատ Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն (1141) ծրագիրը բաժանվել է՝ Երեխաների հիմնահարցեր (1141) և Կանանց հիմնահարցեր, ընտանեկան և կենցաղային բռնության և մարդկանց թրաֆիքինգի զոհերին աջակացություն (1145) ծրագրերի:
- Խոշոր ծրագրերն են՝ Կենսաթոշակային ապահովություն (1102), Սոցիալական ապահովություն (1205), Ժողովրդագրական վիճակի բարելավում (1068):

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ըստ 2026թ. Ուղերձ բացատրագրի Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումն աճողական բնույթ է կրում՝ առաջնահերթ ուղղվելով՝

- ժողովրդագրական վիճակի բարելավմանը,
- զբաղվածության ծրագրերին,
- բնակարային ապահովման,
- ընտանեկան նպաստների տրամադրման

և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով սահմանված առաջնահերթություններից ելնելով, ոլորտի հատկացումները ուղղվելու են նաև ծնելիության խթանմանը և բազմազավակ ընտանիքներին պետական աջակցության ցուցաբերմանը:

2026թ. ընթացիկ ծախսերի աճը հիմականում ապահովվելու է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերի (1,285.9 մլրդ դրամ) ավելացման հաշվին, որոնք 2025 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ավելացել է **17.7%-ով** կամ 193.7 մլրդ դրամով:

Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, 2026թ. Ուղերձ բացատրագիր

# ԾՐԱԳԻՐ- 1011 ԱՆԱՊԱՀՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| ՆՊԱՏԱԿԸ՝ | Օժանդակել անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը՝ մեղմելով աղքատությունը և կրճատելով ծայրահեղ աղքատությունը: |
| ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ | Աղքատության մեղմում և ծայրահեղ աղքատության կրճատում: |
| ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ՝ | Ծածկույթ բնակչությունից, %, որի ելակետային ցուցանիշ է սահմանված 12%, թիրախային ցուցանիշը՝ ոչ ավելի 16%: |

# ԾՐԱԳԻՐ- 1011 ԱՆԱՊԱՀՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| ԴԱՍԻՉ | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | 2025թ., պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) | 2026/2025 (%) |
|---|---|---|---|---|
| 12001 | Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ | 22,754,921 | 24,466,414 | ↑ 7.5 |
| 12007 | Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում | 21,600 | 21,600 | 0.0 |
| 12008 | Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն | 27,900 | 22,500 | ↓ -19.4 |
| 12009 | Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում: | 37,200 | 30,000 | ↓ -19.4 |
| 12010 | ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում | 13,680 | 13,680 | 0.0 |
| 12011 | ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր | 10,080 | 10,080 | 0.0 |
| 32001 | Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում | 74,822 | 206,107 | ↑ 175.5 |

# ԾՐԱԳԻՐ- 1011 ԱՆԱՊԱՀՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| ԴԱՍԻՉ | ՄԻՋՈՑԱՌՈՒՄ | 2025թ., պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) | 2026/2025 (%) |
|---|---|---|---|---|
| 12001 | Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ | 22,754,921 | 24,466,414 | ⬆ 7.5 |
| 12007 | Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում | 21,600 | 21,600 | 0.0 |
| 12008 | Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն | 27,900 | 22,500 | ⬇ -19.4 |
| 12009 | Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում: | 37,200 | 30,000 | ⬇ -19.4 |
| 12010 | ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց վարձակալությամբ բնակարանների ձեռքբերման ծախսերի փոխհատուցման տրամադրում | 13,680 | 13,680 | 0.0 |
| 12011 | ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր | 10,080 | 10,080 | 0.0 |

# ԾՐԱԳԻՐ- 1011 ԱՆԱՊԱՀՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2026թ.-ին Անապահով սոցիալական խմբերին աջակցություն (1011) բյուջետային ծրագրում մի շարք միջոցառումների ֆինանսավորումը կաճի, մասնավորապես՝

- Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում(32001) → 175.5%-ով,
- Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում(11010) → 94.7%-ով,
- Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում(11007) → 74.1% -ով:

Միևնույն ժամանակ, որոշ միջոցառումների դեպքում արձանագրվել է **նվազում**.

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրականացման ապահովում(11001) → -69.4%
- Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին դրամական աջակցություն(12008) և Բնակչության սոցիալական պաշտպանության պետական և պետության կողմից ուղղորդմամբ հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին բնակելի տարածության վարձավճարի հատուցում(12008) → -19.4%-ով:

2026-ին անապահով սոցիալական խմբերի աջակցություն բյուջետային ծրագիրը կաճի 8.1%-ով, կտրամադրվի 25.307մլն դրամ:

**Ծրագրի բյուջեի ավելի քան 96.7 տոկոսը հատկացվելու է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրմանը:**

Ամենամեծ միջոցառումներն են՝

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ,
- Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում,
- Սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում,
- ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային ծրագիր:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ (1011-11007)

| Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում | 2025թ. պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվ, այդ թվում՝ | 20 | 20 |
| ա/ շենքերի թիվ, այդ թվում | 10 | 10 |
| բնակարանների թիվ | 446 | 446 |
| բ/ առանձնատների թիվ | 9 | 9 |
| գ/ առանձին բնակարանների թիվը | 1 | 1 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող անձանց (ընտանիքների) թիվ, այդ թվում՝ | 870 | 870 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ՀՀ անձանց (ընտանիքների) թիվ | 144 | 144 |
| Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող ԼՂ անձանց (ընտանիքների) թիվ | 726 | 726 |

Կացարանները տրամադրվում են սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունեցող

- առանց ծնողական խնամքի մնացած անձանց,
- մանկատների նախկին շրջանավարտներին, սոցիալապես անապահով միայնակ կենսաթոշակառուներին,
- միածնող ընտանիքներին:

Սոցիալական տանը բնակիչներին սոցիալական աշխատողի կողմից տրամադրվում են նաև այլ սոցիալական ծառայություններ:

**2026 թվականի պետական բյուջեով կհատկացվի 96513.3 հազ. դրամ՝ 870 ընտանիքի բնակարանով ապահովելու համար՝ 2025թ.-ի բյուջեով նախատեսված չափաքանակներով՝**

ՀՀ ընտանիքներ՝ 144

ԼՂ ընտանիքներ՝ 726

Սոցիալական բնակֆոնդի շենքերի սպասարկման աշխատանքները 2024 թվականից իրականացվում է «Օթևան» ՊՈԱԿ-ի կողմից:

# ԿԱՑԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ՝

1) օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող անձանց (ընտանիքներին) օրենսդրությամբ սահմանված սոցիալական բնակարանային ֆոնդից՝ անհատույց կամ վարձակալական հիմունքներով,

2) որոշակի բնակության վայր չունեցող անձանց՝ որպես ժամանակավոր օթևան.

3) ընտանիքում բռնության ենթարկված անձանց՝ որպես «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված ապաստարան՝ մինչև 12 ամիս ժամկետով.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչները բավարարող անձանց (ընտանիքներին)՝
ա. բնակարանի վարձակալության վարձավճարի ամբողջական կամ մասնակի հատուցման միջոցով,
բ. բնակարանի գնման պետական վկայագրի կամ հիպոտեկային վարկի մարմանն ուղղած ֆինանսական աջակցության միջոցով,
գ. նվիրաբերության միջոցով:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՄԻԱՅՆԱԿ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՍՊԱՌԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (1011-12007)

| Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին սպառած բնական գազի, էլեկտրական էներգիայի և ջրամատակարարման վարձավճարների փոխհատուցում | 2025թ. պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Աջակցություն ստացած անձանց թիվ, մարդ | 150 | 150 |

Սույն միջոցառման շրջանակում նախատեսվում է փոխհատուցել սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուների կողմից սպառած գազի, էլեկտրաէներգիայի և ջրի վարձավճարները՝ համագործակցող բանկի կողմից առցանց եղանակով, բանկի հետ կնքված երկկողմանի պայմանագրի հիման վրա:

Յուրաքանչյուր կենսաթոշակառուի համար նախատեսված է տարեկան **144հազար դրամ**:

**ՀՀ 2026 թ.-ի պետական բյուջեներով նախատեսվում է միջոցառմանը հատկացնել 21,600հազ. դրամ՝ 150 շահառուի կոմունալ ծառայությունների ծախսերը փոխհատուցելու համար:**

Սույն միջոցառմամբ նախատեսվում է վերանորոգել ՀՀ ԱՍՀ նախարարությանը հատկացված և առաջիկայում հատկացվելիք շենքերը՝ դրանք որպես սոցիալական բնակարանային ֆոնդ օգտագործելու նպատակով:

2025 թվականի մարտի դրությամբ շուրջ 380 անձ տեղավորված են սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում, 280 անձ (տեղացի) հաշվառված են հերթացուցակում, իսկ ԼՂ-ից տեղահանվածները շուրջ 480 են, ովքեր ունեն կացարի կարիք:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ (1011-32001)

| Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերի վերանորոգում | 2025թ. պլան (հազար դրամ) | 2026թ. (հազար դրամ) |
|---|---|---|
| Շենքերի թվաքանակ | 4 | 2 |
| ք. Արտաշատ Մռավյան փողոց 32/1 | 1 | 0 |
| Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն | 1 | 0 |
| Հրազդանի նախկին քրեակատարողական հիմնարկի շենք | 1 | 0 |
| ք.Դիլիջան Գոլովինո թաղամաս, Կամոյի փգ,137-րդ շենք | 1 | 0 |
| ք.Վանաձոր, Գիշերօթիկ դպրոցի մասնաշենք | - | 1 |
| «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ | - | 1 |

2026թ.-ին ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 21.6 մլն դրամ է սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող 150 միայնակ կենսաթոշակառուի կոմունալ վճարների փոխհատուցման համար, ինչպես նաև նախատեսվում է սոցիալական բնակարանային ֆոնդի ևս 2 շենքերի վերանորոգում և նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գործընթացների իրականացում՝ 206.1 մլն դրամի շրջանակում:

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր www.budgets.am